ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4 ապրիլի 2023 թվական ք. Երևան

ուսումնասիրելով ըստ հայցի՝ Արմեն Միրզոյանի ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության՝ «գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին», թիվ ՎԴ6/0127/05/19 գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու վերաբերյալ ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2023 թվականի մարտի 22-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. Արմեն Միրզոյանը 2019 թվականի նոյեմբերի 8-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության՝ անկված երկու գլուխ կենդանիների անկման պատճառները պարզելու վերաբերյալ վարչական վարույթ չհարուցելու և փաստացի անկված կենդանիները 2017 թվականի փետրվարի 28-ի թիվ ՀՀԳՆ-ԵՏՎ-ԱԱՎ-19 պայմանագրի առարկայում (պայմանագրի փոփոխությունում) ընդգրկելու հետ կապված գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին:

2. ՀՀ վարչական դատարանի՝ 2023 թվականի փետրվարի 23-ի որոշմամբ գործը վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2023 թվականի մարտի 22-ի որոշմամբ գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին:

4. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2023 թվականի մարտի 28-ին:

<u>Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Հղում կատարելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, 81-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությանը, 3-րդ հոդվածի 1-ին մասին, 128-րդ հոդվածի 1-ին մասին, 436-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 21-րդ հոդվածին, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածին, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/1621/05/14 գործով արտահայտած իրավական դիրքորոշմանը, ՀՀ վարչական դատարանը 2023 թվականի փետրվարի 23-ի որոշմամբ գործը վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ այն պատճառաբանությամբ, որ հայցվորի և ՀՀ գյուղատնտեսության նախարարության (որի իրավահաջորդն է ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը) միջև կնքվել է գույքի առուվաճառքի պայմանագիր, իսկ հայցվորի պահանջը և այն հիմնավորող փաստարկները վերաբերում են պայմանագրով սահմանված պայմաններին, ինչպես նաև վաճառվող կամ վաճառված ապրանքի որակին: Կնքված պայմանագրի շրջանակներում ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը հանդես է եկել ոչ թե որպես հանրային իշխանական լիազորություններով օժտված անձ, ով իրացնում է հանրային իրավունքի նորմերով իրեն վերապահված լիազորություններն իր գործադիր-կարգադրիչ գործունեության ընթացքում, այլ որպես քաղաքացիական իրավահարաբերության մասնակից՝

առուվաճառքի պայմանագրի կողմ, Հայաստանի Հանրապետության անունից: Հետևաբար՝ քննարկվող իրավահարաբերության բովանդակությունն է կազմում ոչ թե պետության՝ ի դեմս ՀՀ գյուղատնտեսության (էկոնոմիկայի) նախարարության կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, այլ քաղաքացիական իրավահարաբերություններում որպես առուվաճառքի պայմանագրի կողմ հանդես գալու իր իրավունքը, և այս իրավահարաբերությունն ուղղված է պետության՝ որպես քաղաքացիական իրավահարաբերությունների սուբյեկտի մասնավոր շահի իրացմանը: Ընդ որում, իրավահարաբերությունը կարգավորող նորմերն իրենց բնույթով մասնավոր իրավունքի նորմեր են և վարքագծի կանոններ են սահմանում մասնավոր իրավահարաբերության սուբյեկտների համար: Ուստի տվյալ վեճը չի բխում հանրային իրավահարաբերություններից, այլ առկա են առուվաճառքի պայմանագրից բխող քաղաքացիաիրավական հարաբերություններ, հետևաբար գործն ընդդատյա չէ ՀՀ վարչական դատարանին[1]:

6. Հղում կատարելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ և 6-րդ մասերին, 3-րդ հոդվածի 1-ին մասին, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասին, 20-րդ հոդվածի 1-ին մասին, 21-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասին, 20-րդ հոդվածի 1-ին մասին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, 10-րդ հոդվածի 2-րդ մասին, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածին, 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2023 թվականի մարտի 22-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին և այդ առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ նշելով հետևյալը. *«(…) ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է, Արմեն Մարտունի Միրզոյանի և ՀՀ էկոնոմիկայի նախարարության միջև ծագած իրավահարաբերության բովանդակությունը կազմում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության իր հանրային իշխանական լիազորությունների*

[1] Տե՛ս գործը, թերթեր 113-116:

իրականացման պարտականությունը և այդ իրավահարաբերությունները ծագել են հանրային շահի իրացման կապակցությամբ, մասնավորապես՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության գործողությունները՝ վարչական վարույթ չհարուցելու հետ կապված:

Փաստորեն, հայցվորը թիվ ՎԴ6/0127/05/19 վարչական գործով վիճարկում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության գործողությունները՝ վարչական վարույթ չհարուցելու հետ կապված, որոնք իրենցից ենթադրում են հանրային իրավահարաբերություններ, ուստի և հայցվոր Արմեն Մարտունի Միրզոյանի և ՀՀ էկոնոմիկայի նախարարության միջև ծագած իրավահարաբերությունները հանրային բնույթի են:

(…)

Հատկանշական է, որ վարչական վարույթ հարուցելուց հետո վարչական վարույթ իրականացնող մարմինը՝ պատասխանողը, պարտավոր էր պարզել 2017 թվականի փետրվարի 28-ի թիվ ՀՀԳՆ-ԵՏՎ-ԱԱՎ-19 պայմանագրում փաստացի անկված կենդանիներն ընդգրկելու հարցը, ինչն ակնկալել է հայցվորը վարչական վարույթ հարուցելու արդյունքում, որպիսի վարչական մարմնի գործողությունները՝ վարչական վարույթ չհարուցելու կապակցությամբ, վիճարկում է հայցվորը հենց վարչական դատավարության կարգով»[2]:

<u>Վճռաբեկ դատարանի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը</u>.

7. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավո՞ր է արդյոք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ6/0127/05/19 գործն ըստ հայցի՝ Արմեն Միրզոյանի ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության՝ «գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին», ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:*

8. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ *«Մասնագիտացված դատարաններն են՝ վարչական դատարանը, (…)»:*

---

[2] Տե՛ս գործը, թերթեր 122-124:

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:*

Նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի:*

2. Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի (...)»:

Նույն օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով»:*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, (...)»:*

Նույն օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանը, գործի քննության ցանկացած փուլում պարզելով, որ տվյալ հայցադիմումի պահանջն ընդդատյա չէ իրեն, այն պատճառաբանված որոշմամբ վերահասցեագրում է ըստ ընդդատության»:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝*«(...) քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերությունների մասնակիցները՝ ֆիզիկական անձինք՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա պետությունների քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք (այսուհետ՝ քաղաքացիներ) ու իրավաբանական անձինք են, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունը և համայնքներն են (...)»:*

Նույն օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հայաստանի Հանրապետությունը և համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով»:*

9. Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման հարցին մանրամասն անդրադարձ է կատարել Վճռաբեկ դատարանը՝ *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրցավոր սեփականության գործակալության* վարչական գործով՝ 2016 թվականի ապրիլի 22-ի որոշմամբ արձանագրելով հետևյալը. *«(…) [Հ]անրային իրավահարաբերությունը մասնավոր հարաբերությունից տարանջատվում է թե՛ սուբյեկտային կազմով, թե՛ բովանդակությամբ և թե՛ օբյեկտով: Այդ տարրերն առանձին-առանձին անհրաժեշտ են, իսկ իրենց համակցության մեջ բավարար են, որպեսզի փաստվի իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը: Իրավահարաբերությունը հանրային հատկանիշով բնութագրելու համար նախևառաջ անհրաժեշտ է, որ հարաբերության կողմ հանդես գա հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը (վարչական մարմիններ, դրանց պաշտոնապար անձիք, այդ թվում պետական և համայնքային ծառայողներ): Մինչդեռ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ իրավահարաբերության կողմ լինելը դեռևս չի նշանակում, որ իրավահարաբերությունը հանրային բնույթի է, քանի որ հանրային բնույթը՝ որպես իրավահարաբերության բնութագրիչ, ծավալային առումով ներառում է իրավահարաբերության թե՛ սուբյեկտային կազմը, թե՛ օբյեկտը, թե՛ բովանդակությունը և ի հայտ է գալիս միայն վերոնշյալ երեք տարրերի համակցությամբ: (…) [Հ]անրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները (…)»*[3]:

[3] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրցավոր սեփականության գործակալության* վարչական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0830/05/14 որոշումը:

10. Սույն որոշման 8-9-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից և մեջբերված իրավական դիրքորոշումներից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին է վերապահել այն բոլոր գործերի քննությունը, որոնց քննությունը վերապահված չէ մասնագիտացված դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Միևնույն ժամանակ, օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի վերաբերյալ գործերը: Փաստորեն, որևէ դատական գործի՝ վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

Բացի այդ, իրավահարաբերությունը որպես հանրային որակելու համար անհրաժեշտ է, առաջին հերթին, բացահայտել իրավահարաբերության տարրերը՝ օբյեկտը, սուբյեկտը և բովանդակությունը: Ուստի, միայն իրավահարաբերության կողմերից մեկի՝ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ լինելու հանգամանքը դեռևս բավարար չէ՝ տվյալ իրավահարաբերությունը հանրային որակելու համար, քանի որ պետությունը կամ համայնքը՝ ի դեմս իրավասու վարչական մարմնի, կարող են ներգրավվել նաև մասնավոր հարաբերություններում: Վերջիններս ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով կարող են մասնակցել քաղաքացիական իրավահարաբերություններին, իրենց իրավասության սահմաններում ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ ու պարտականություններ, այդ թվում նաև՝ կնքել քաղաքացիաիրավական պայմանագրեր:

11. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- Արմեն Միրզոյանը 2019 թվականի նոյեմբերի 8-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության՝ անկված երկու գլուխ կենդանիների անկման պատճառները պարզելու վերաբերյալ վարչական վարույթ չհարուցելու և փաստացի անկված կենդանիները 2017 թվականի փետրվարի 28-ի թիվ ՀՀԳՆ-ԵՏՎ-ԱԱՎ-19 պայմանագրի առարկայում (պայմանագրի փոփոխությունում) ընդգրկելու հետ կապված գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի

մասին[4], որի հիման վրա հարուցված գործը ՀՀ վարչական դատարանի՝ 2023 թվականի փետրվարի 23-ի որոշմամբ վերահասցեագրվել է ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին[5],

- հղում կատարելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, 81-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությանը, 3-րդ հոդվածի 1-ին մասին, 128-րդ հոդվածի 1-ին մասին, 436-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 21-րդ հոդվածին, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածին, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/1621/05/14 գործով արտահայտած իրավական դիրքորոշմանը ՝ ՀՀ վարչական դատարանը 2023 թվականի փետրվարի 23-ի որոշմամբ գործը վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ այն պատճառաբանությամբ, որ հայցվորի և ՀՀ գյուղատնտեսության նախարարության (որի իրավահաջորդն է ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը) միջև կնքվել է գույքի առուվաճառքի պայմանագիր, իսկ հայցվորի պահանջը և այն հիմնավորող փաստարկները վերաբերում են պայմանագրով սահմանված պայմաններին, ինչպես նաև վաճառվող կամ վաճառված ապրանքի որակին: Կնքված պայմանագրի շրջանակներում ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը հանդես է եկել ոչ թե որպես հանրային իշխանական լիազորություններով օժտված անձ, ով իրացնում է հանրային իրավունքի նորմերով իրեն վերապահված լիազորություններն իր գործադիր-կարգադրիչ գործունեության ընթացքում, այլ որպես քաղաքացիական իրավահարաբերության մասնակից՝ առուվաճառքի պայմանագրի կողմ, Հայաստանի Հանրապետության անունից: Հետևաբար՝ քննարկվող իրավահարաբերության բովանդակությունն է կազմում ոչ թե պետության՝ ի դեմս ՀՀ գյուղատնտեսության (էկոնոմիկայի) նախարարության կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, այլ քաղաքացիական իրավահարաբերություններում որպես առուվաճառքի պայմանագրի կողմ հանդես գալու իր իրավունքը, և այս իրավահարաբերությունն ուղղված է պետության՝ որպես քաղաքացիական իրավահարաբերությունների

[4] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:
[5] Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:

սուբյեկտի մասնավոր շահի իրացմանը: Ընդ որում, իրավահարաբերությունը կարգավորող նորմերն իրենց բնույթով մասնավոր իրավունքի նորմեր են և վարքագծի կանոններ են սահմանում մասնավոր իրավահարաբերության սուբյեկտների համար: Ուստի տվյալ վեճը չի բխում հանրային իրավահարաբերություններից, այլ առկա են առուվաճառքի պայմանագրից բխող քաղաքացիաիրավական հարաբերություններ, հետևաբար գործն ընդդատյա չէ ՀՀ վարչական դատարանին[6],

- հղում կատարելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ և 6-րդ մասերին, 3-րդ հոդվածի 1-ին մասին, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասին, 20-րդ հոդվածի 1-ին մասին, 21-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասին, 20-րդ հոդվածի 1-ին մասին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, 10-րդ հոդվածի 2-րդ մասին, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածին, 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2023 թվականի մարտի 22-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին և այդ առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ նշելով, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է, Արմեն Մարտունի Միրզոյանի և ՀՀ էկոնոմիկայի նախարարության միջև ծագած իրավահարաբերության բովանդակությունը կազմում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը և այդ իրավահարաբերությունները ծագել են հանրային շահի իրացման կապակցությամբ, մասնավորապես՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության գործողությունները՝ վարչական վարույթ չհարուցելու հետ կապված[7]:

12. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 8-10-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է նկատել, որ տվյալ դեպքում Արմեն Միրզոյանի և ՀՀ գյուղատնտեսության նախարարության (իրավահաջորդ՝ ՀՀ

[6] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[7] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

էկոնոմիկայի նախարարություն) միջև 2017 թվականի փետրվարի 28-ին կնքվել է «Տարաժամկետ վճարման պայմանով առուվաճառքի պայմանագիր», որով ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում Արմեն Միրզոյանին հանձնել պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված տոհմային կենդանիները, իսկ Արմեն Միրզոյանը պարտավորվել է ընդունել այդ ապրանքը և վճարել դրա համար տարաժամկետ վճարման պայմանով՝ համաձայն պայմանագրի թիվ 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցի:

Այսինքն՝ տվյալ պայմանագրով կողմերի միջև ծագել են պայմանագրային հարաբերություններ, որոնցում վարչական մարմինը՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը, մասնակցել է որպես մասնավոր, քաղաքացիաիրավական հարաբերությունների սուբյեկտ: Տվյալ հարաբերություններում վարչական մարմինը չի իրացրել իր հանրային իշխանական լիազորությունները, այլ ներգրավվել է դրանցում որպես պայմանագրի կողմ: Իսկ սույն գործով հայցվորի կողմից ներկայացված փաստարկները, ըստ էության, վերաբերում են պայմանագրային պարտավորությունների կատարմանը, որպիսի իրավահարաբերությունները գտնվում են մասնավոր իրավունքի կարգավորման ոլորտում:

Վերոգրյալից հետևում է, որ թեև պայմանագրի հիման վրա ծագած իրավահարաբերություններին մասնակցում է հանրային իշխանության սուբյեկտ հանդիսացող վարչական մարմինը, այդուհանդերձ, այդ հարաբերություններում վերջինս չունի օրենքով սահմանված իշխանական լիազորություններ իրականացնելու պարտականություն, այլ իրացնում է պետության՝ որպես քաղաքացիական շրջանառության մասնակցի, քաղաքացիաիրավական բնույթի իրավունքներն ու պարտականությունները:

13. Վերոգրյալի հիման վրա՝ գտնում եմ, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ6/0127/05/19 գործն ըստ հայցի՝ Արմեն Միրզոյանի ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության՝ «գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին», ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին, հիմնավոր չէ:

Ուստի, Արմեն Միրզոյանի հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ՎԴ6/0127/05/19 գործը ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

թիվ ՎԴ6/0127/05/19 գործն ըստ հայցի՝ Արմեն Միրզոյանի ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության՝ «գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին», ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ